Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-470-24.03.2014-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

<<ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ օրենք) 18-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

<<7. Հայաստանի Հանրապետությունում դասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Պարտադիր միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության պահանջը չի տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որոշակի խմբերի վրա:>>:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 3. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին պարբերությունն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունիսի 1–ից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ներկայացնում <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Կ-470-470[1]-24.03.2014-ԳԿ-010/1) վերաբերյալ արված դիտողությունների և առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունները**
1	2	3	4
Հայաստանի Հանրապետության կառավարություն	1. 19.05.2014 ՀՀ ԱԺ նիստում առաջին ընթերցմամբ անցած <<**Կրթության մասին**>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Կ-470-24.03.2014-ԳԿ-010/1) ՀՀ օրենքի նախագծում առաջարկում ենք . 1) նախագծի **հոդված 1-ում՝** օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.		Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն.

	<<7. Հայաստանի Հանրապետությունում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ: *Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:* *Պարտադիր միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության պահանջը չի տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների*		

	որոշակի խմբերի վրա:>>: 2) նախագիծը լրացնել նոր՝ հոդված 3-րդով. ***«Հոդված 3. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին պարբերության պահանջը չի տարածվում սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ և բարձր դասարաններում սովորողների վրա:»*** 2. 19.05.2014 ՀՀ ԱԺ նիստում առաջին ընթերցմամբ անցած «**Հանրակրթության մասին**» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (Կ-470[1]-24.03.2014-ԳԿ-010/1) նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:		